Առաջարկներ Ներկայացնելու Հրավեր (ԱՆՀ)
Երկիրը՝ Հայաստանի Հանրապետություն
Ծրագրի անվանումը՝ ,Ոռոգման համակարգերի բարելավման ծրագիրե (ՈՀԲԾ)
ՎԶՄԲ փոխառության No.՝ 8267AM
Պայմանագրի անվանումը՝ «Մեղրիի ինքնահոս համակարգի աջ ճյուղ խողովակաշարի կառուցում»
Պայմանագիր No.՝ ISEP/NCB/CW-16/001

1. Հայաստանի Հանրապետությունը ֆինանսավորում է ստացել ՀԲ-ից՝ **«Ոռոգման համակարգերի բարելավման ծրագրի»** ծախսերը հոգալու նպատակով և մտադիր է այդ միջոցների մի մասն օգտագործել **«Մեղրիի ինքնահոս համակարգի աջ ճյուղ խողովակաշարի կառուցում» ISEP/NCB/CW-16/001** պայմանագրի շրջանակներում վճարումներ կատարելու համար: Այս պայմանագրի վճարումները իրականացվելու են Համաշխարհային բանկի և ՀՀ կառավարության համատեղ ֆինանսավորմամբ: Մրցութային գործընթացը ղեկավարվելու է ՀԲ-ի կանոններով և ընթացակարգերով:

2. **«Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ն (ՋՏԾԻԳ ՊՀ)** հրավիրում է մրցույթի իրավասու մասնակիցներին փակ մրցութային առաջարկներ ներկայացնել հետևյալ շինարարական աշխատանքներն իրականացնելու համար՝ հողային, միաձույլ երկաթբետոն և միաձույլ բետոն, խողովակներ և խողովակաշարային սարքեր, մետաղական կոնստրուկցիաներ, մեկուսացման և էլեկտրատեխնիկական աշխատանքներ և այլն (ըստ ԱԾՑ-ի):

Շինհրապարակը գտնվում է.
- Երևան քաղաքից Միջազգային նշանակության Մ-2 ավտոճանապարհով մոտ 372կմ (ք.Մեղրի) հեռավորության վրա, ՀՀ Սյունիքի մարզում, Մեղրի գետի հովտում՝ 510-750մ բացարձակ նիշերի վրա, Ագարակ քաղաքի համայնքների տարածքներում:

Աշխատանքների տևողությունը՝ **8 (ութ) ամիս է:**

Որակավորման չափանիշները ներառում են (սակայն չեն սահմանափակվում*).

- Մրցույթի մասնակիցը պետք է ցույց տա, որ նրա համար մատչելի են իրացվելի ակտիվներ, չգրավադրված անշարժ գույք, վարկային գծեր և այլ ֆինանսական միջոցներ (բացի որևէ պայմանագրային կանխավճարից), որոնք բավարար են շինարարության ժամանակ կանխիկ դրամի հոսքը բավարարելու համար, որը կազմում են **364,230,000 ՀՀ դրամ**՝ հանած Մրցույթի մասնակցի այլ պարտավորությունները:

- Վերջին 3 (երեք) տարիների ընթացքում (սկսած 2013թ. հունվարի 1-ից) շինարարության գծով նվազագույն միջին տարեկան շրջանառությունը՝ հաշվարկված որպես շարունակվող և/կամ ավարտված պայմանագրերով ստացված վճարումների ընդհանուր գումար, բաժանած 3-ի (երեք), պետք է կազմի՝ **1,639,000,000 ՀՀ դրամ:**

- Շինարարական պայմանագրերի առնվազն 5 (հինգ) տարվա փորձ՝ որպես գլխավոր կապալառու, ՀՁ անդամ, ենթակապալառու կամ կառավարման կապալառու, սկսած 2011թ. հունվարի 1-ից:

- 2011թ. հունվարի 1-ից մինչև մրցութային առաջարկի ներկայացման վերջնաժամկետը ընկած ժամանակահատվածում, ոռոգման համակարգերի հիդրոտեխնիկական կառույցների շինարարության (օրինակ՝ ջրընդունիչ/ջրառ հանգույց/մայր և երկրորդ կարգի ջրանցքներ/ջրագծեր) նվազագույն թվով համանման պայմանագրեր, որոնք Մրցույթի մասնակիցը գոհացուցիչ և էապես ավարտել է որպես գլխավոր կապալառու, ՀՁ անդամ, կառավարման կապալառու կամ ենթակապալառու. 1 (մեկ) պայմանագիր՝ առնվազն **582,800,000 ՀՀ դրամ արժեքով:**

- Վերոհիշյալ կամ այլ ավարտված պայմանագրերում, կամ այլ իրականացվող պայմանագրերում 2011թ. հունվարի 1-ից մինչև հայտերի ներկայցման վերջնաժամկետն ընկած ժամանակահատվածում, մասնակցություն հետևյալ հիմնական աշխատանքների նվազագույն ծավալների հաջող կատարմանը՝ որպես Գլխավոր կապալառու, ՀՁ անդամ, Կառավարման Կապալառու կամ Ենթակապալառու.

  -Հողային աշխատանքներ՝ առնվազն 12,000 մ^3 (վերը նշված ժամանակահատվածում ցանկացած տարվա ընթացքում)

  -Խողովակներ և/կամ խողովակաշար – առնվազն 5,000 մ՝ նվազագույնը D=426մմ տրամագծով (վերը նշված ժամանակահատվածում ցանկացած տարվա ընթացքում)

Պահանջվող հիմնական աշխատանքների ծավալը կարող են ցույց տրվել մեկ կամ մի քանի պայմանագրեր միավորելու միջոցով (առավելագույնը երեք), եթե դրանք իրականացվել են նույն ժամանակահատվածում:

Իրավասու տեղական կապալառուներին/համատեղ ձեռնարկումներին նախապատվություն **չի տրվելու**:

**Մանրամասն տեղեկություններ որակավորման պահանջների վերաբերյալ ներկայացված է Մրցութային փաստաթղթում (Բաժին III. Որակավորման չափանիշներ և պահանջներ):*

3. Մրցույթն անց է կացվելու **Ազգային մրցութային սակարկությունների (ԱՄՍ)** ընթացակարգի համաձայն, որը սահմանված է Համաշխարհային Բանկի ուղեցույցներում՝ «Ապրանքների, աշխատանքների, և ոչ-խորհրդատվական ծառայությունների գնում ՁՎՄԲ-ի փոխառությունների և ՄՁԸ-ի վարկերի ու դրամաշնորհների շրջանակներում Համաշխարհային բանկի փոխառուների կողմից» (2011թ. հունվար, վերանայված՝ 2014թ. հուլիսին): Մրցույթը բաց է մրցութային փաստաթղթերով սահմանված բոլոր իրավասու մասնակիցների համար: Ի լրումն, խնդրում ենք ուշադրություն դարձնել 1.6 և 1.7 կետերի վրա, որով սահմանվում են Համաշխարհային բանկի քաղաքականությունը շահերի բախման մասով:

4. Մրցույթի շահագրգիռ իրավասու մասնակիցները կարող են լրացուցիչ տեղեկություններ ստանալ ՋՏԾԻԳ ՊՀ-ից (պրն.Սամվել Կարապետյան – Պլանավորման և նախագծման ճարտարագետ, հեռ. (+37441) 111-402, էլ.փոստ: skarapetyan@wsdp.am) և ուսումնասիրել մրցութային փաստաթղթերը ներքո նշյալ հասցեով՝ աշխատանքային օրերին ժամը 10:00-ից մինչև 17:00 (երկուշաբթի օրվանից մինչև ուրբաթ):

5. Մրցույթի շահագրգիռ իրավասու մասնակիցները կարող են ձեռք բերել մրցութային փաստաթղթերի ամբողջական փաթեթը **հայերեն լեզվով**՝ ներկայացնելով գրավոր դիմում ներքոհիշյալ հասցեով և վճարելով **40,000 ՀՀ դրամ չհատուցվող գումա**ր: Նշված գումարի վճարման եղանակն է բանկային փոխանցումը հետևյալ հաշվին.

Շահառու: Հայաստանի Հանրապետության Ֆինանսների նախարարություն/Կենտրոնական գանձապետարան.
Հաշվի համար: 900000906082 (ՀՀԴ)

Մրցութային փաստաթղթերը կտրամադրվեն մրցույթի մասնակիցներին նաև էլեկտրոնային տարբերակով: Տպված և էլեկտրոնային տարբերակների միջև հակասությունների դեպքում տված տարբերակը գերակայում է:

6. Մրցութային առաջարկները պետք է ներկայացվեն ստորև նշված հասցեով **2016թ.հոկտեմբերի 3-ին ժամը 16:00**-ին (Երևանի ժամանակով) կամ ավելի վաղ: Էլեկտրոնային եղանակով մրցութային առաջարկների ներկայացում չի թույլատրվում: Ուշացված մրցութային առաջարկները կմերժվեն: Մրցութային առաջարկները կբացվեն բացմանը մասնակցելու ցանկություն ունեցող մասնակիցների ներկայացուցիչների ներկայությամբ **2016թ. հոկտեմբերի 3-ին ժամը 16:00**-ին (Երևանի ժամանակով) ներքո նշված հասցեում:

7. Մրցութային առաջարկները պետք է ուղեկցվեն Մրցութային առաջարկի երաշխիքով (բանկային երաշխիք), որի գումարն է՝ **14,600,000 ՀՀ դրամ**:

8. Վերևում հիշատակվող հասցեն է.
«Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ
Պրն. Ֆելիքս Մելիքյան, Տնօրեն
Պրն. Մարտին Չարյան, գնումների մասնագետ
ՀՀ, Երևան 0033, Բաղրամյան 75/44
Հեռ՝ (+37410) 277-943 (ընդունարան), 266-058 (գնումների բաժին)
Էլ. փոստ՝ fmelikyan@wsdp.am; mcharyan@wsdp.am;